

Ներշնչում մեզ Ո՞չ թէ այն մարդն է ամենից շատ ապրել, որ ամենից շատ տարիներ է անցրել, այլ նա, ով ամենից շատ է զգացել իր կետանքը՝ Շատերին են թաղել հարիւր տարեկան հասակում, որ հենց իրենց ծննդեան վայրկեանին մեռել են. Աւելի լաւ կլինէր, եթէ դրանք երիտասարդութեան միջոցին դերեղման իջած լինէին, գոնէ մինչև այն ժամանակ ապրած կլինէին.

33. Մեր բոլոր իմաստութիւնը կայանում է սարկական նախապաշարմանց մէջ, մեր բոլոր սովորութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ ստրկութիւն, ձնշումն և բռնութիւն. Քաղաքացի մարդը (բաղաբակրմուածը) աշխարհ է գալիս իրբե ստրուկ, ապրում և մեռնում է դարձեալ իրբե ստրուկ. ծննդից յետոյ նրան կապկառում են խանձարուրի մէջ, իսկ մեռնելուց յետոյ՝ դագաղի մէջ. որքան ժամանակ որ նա պահպանում է իր մարդկոյին կերպարանքը՝ կապկառուած է մեր կազմակերպութեան որոշումներով.

34. Ասում են, թէ շատ մանկաբարձներ նորածին երեխաների դրսւները ձնշելով՝ ուղում են վայելուչ ձև տալ նրանց. և այդ բանը համբերում ենք. Ուրեմն մեր դրսւները ճիշտ չեն այնպէս, ինչպէս որ ձնակերպել է Արարիչը, մենք պէտք է նրան ձնակերպենք՝ դրսից մանկաբարձների, իսկ ներսից փիլիսոփաների շնորհիւ. Այս գէպքում Կարսցիբները կիսով չափ մեզնից երջանիկ են.

35. Հեազիւ երեխան իր մօր արգանդից դուրս գալով՝ ազատութիւն է վայելում իր անդամները շարժելու և մեկնելու և ահա նրան կրկին նոր կապանքների մէջ են դնում: Դըլեին անշարժ դիրք տալով, ուաքերը մեկնելով և երկու ձեռքերը պինդ սեղմելով մարմնին՝ բարուրում են մանկանը և ամեն աեսկ կապանքներով ու ժապաւէններով շրջապատում, որ նրան թոյլ չեն տալիս դիրքը փօխելու. Նրա բաղդիցն է գեռ, որ շնչառապա չեն անում և գոնէ նախազգուշութիւն բանեցնելով՝ մի կողմի վրայ են դնում, որպէս զի նրա բերանից հստող հեղուկն անարդել դուրս գայ. Նա այնքան ազատութիւն չունի, որ գլուխը մի կողմը դարձնելով՝ հեշտացնէ արտահոսումը<sup>1)</sup>.

36. Նորածին մանուկը պահանջ է զգում՝ իր անդամները ապրածելու, շարժելու և ազատելու այս թմրութիւնից, որի

<sup>1)</sup> Բիւֆօնի բնական պատմութիւնից. IV, 190, 12..

մէջ գտնուել են այնքան երկար ժամանակ՝ կծիկի նման փաթաթուած։ Այժմ թէ ձգում են նրա ձեռք ու ոտքը, սակայն թոյլ չեն տալիս ազատ շարժուելու, մինչև անդամ դրուխը ճշնշում են գլխակապերով։ Կարծես վախենում են՝ չլինի թէ երեւայի, որ իսկապէս ապրում է նա։

37. Այսպիսով մարմին ներքին մասերի աճման ձգտումն անյաղթելի արգելքների է հանդիպում պահանջուած շարժողութիւնները կատարելու համար։ Երեխան յոգնեցնում է իրեն անօգուտ ջանքերով, որ ուժասպառ են անում նրան կամ թէ նրա զարգացումը դանդաղեցնում նա աւելի բիչ էր սեղմուած, ճնշուած ու կապակցուած սաղմի ներքնաթաղանթի մէջ, բան այժմ իր իսանձարուրում։ Ես չեմ կարծում, որ երեխան ճնուելով՝ մի բան վաստակած լինի։

38. Այն անգործունէութիւնը և ստիպմունքը, որի մէջ պահում են երեխայի անդամները, անպայման կերպով արգելք կլինեն արեխան և հիւթերի շրջանառութեան։ Դրանք անկարելի են դարձնում, որ երեխան ուժեղանայ, աճէ և վնասում են նրա մարմնի կազմութեանը։ Այն երկներում, ուր չափազանցութեան հասնող այդ զգուշացուցիչ միջցները չեն գործ դրում, բալոր մարդիկ մեծ, զօրեղ են և լաւ հասակ ունեն, իսկ այն երկիրները, ուր երեխաներին իսանձարուրում են կապում, լի են սապատողներով, կաղերով, ծռոտնանիներով, հաշմերով, ծուռ ողնանիներով և ամեն տեսակ այլանդապուած մարմին ունեցող մարդկանցով։ Ավելնալով թէ մի գուցէ մարմինն ազատ շարժողութիւնից անեանայ։ Ճնշումներով են այլանդակում նրան, ծանկանալով երեխայի հաշմանալու առաջն առնել՝ հենց իրենք են հաշմացնում նրան։

39. Այսպիսի անսիրտ ստիպմունքը մի՛թէ ազդեցութիւն չի ունենայ ինչպէս մարմնի կազմութեան, նյոյնպէս և նրանց հոգեկան տրամադրութեան վրայ։ Նրանց առաջին զգացմունքը՝ ցաւ ու տանջանք է։ Նրանց անելիք ամեն մի շարժողութիւնն արգելքի է հանդիպում։ շղթայակապ կայտանաւրից աւելի դժբաղդ լինելով՝ նրանք զօւր են ջանք ժամփում, բարս կանում և լալիս Արտասուբը, ինչպէս ասում են, նրանց առաջին հնչիւնն է։ Ես հաւատում եմ. հենց ծնուելու օրից չարչարում ենք նրանց, մեզնից ստացած նրանց առաջին ընծան՝ շղթաներն են, իսկ առաջին անդամ զգացած վարմունքը՝ տանց ջանք։ Միայն նրանց ձայնն ենք ազատ թողնում և նրանք էլ

ինչո՞ւ չպէտք է օգուտ քաղէին այդ հանգամանքից և չգանգատուէին նրանք աղաղակում են իրենց կրած աղէտների համար. եթէ գու՛ էլ նրանց նման կապկպած լինէիր, նրանցից առելի բարձր կաղաղակէիր.

40. Ո՞րտեղից է առաջանում այս անմիտ գործածութիւնը.—մի անբնական սովորութիւնից: Այն ժամանակից, երբ մայրերը մոռանալով իրենց առաջին պարտականութիւնը, այլ ևս անձամբ չկամեցան կերակրել իրենց զաւակներին, հարկ եղաւ նրանցը յանձնել վարձկան կանանցը. սրանք օտարածին զաւակների մայր դառնարով և բնութիւնից ներշնչուած չլինելով բուն մայրական զգացմունքներով՝ ամեն կերպ աշխատեցին, որ իրենց բանը հեշտացնեն. Բոլորովին ազատ թողնուած երեխան տեսական հսկողութիւն կպահանջէր, իսկ եթէ նա լաւ կապկած լինի, կարելի է մի անկիւն ձգել և նրա աղաղակի վրայ ուշադրութիւն չդարձնել. Եթէ մենք դայեակի անհոգութեան ապացցներ չունենք, եթէ մանուկը ձեռքը կամ ոտքը չէ կոտրում ոյդքանը բաւական է. ո՞վ է հարցնոյլը՝ թէ նա կնուազի կամ թէ իր ամբողջ կեանքի ընթացքում թուլակալմ կլինի. Մենք պահպանում ենք երեխայի անդամները ի հաշիւ նրա մարմին և այնուհետև ինչ էլ որ լինի՝ դայեակի յանցանքը չէ:

41. Գիտե՞ն արդեօք պյն սիրելի մայրերը, որոնք իրենց զաւակների պատճառած գլխացաւանքից ազատ, ուրախութեամբ նուփրւում են քաղաքային կեանքի զուարձութիւններին, գիտե՞ն արդեօք գրանք՝ թէ ի՞նչպէս է ինամում զիւղում խանձարութիւ երեխան. Նոյն իսկ ամենանշնին պատահական պատճառից երբ երեխան լալիս է, դայեակները խանձարութը մի կապոց լուացքի նման կախում են մեխից և մինչդեռ իրենք առանց շատապելու գործի ետակիցն են լինում, դժբաղդ արարածը մնում է այդպէս խաչուած ու կախուած գրութեան մէջ. Այդպիսի գրութեամբ գտնուած բալը մանուկների դէմքերը կապտագոյն կարմիր են եղել. ստիպմամբ ձնչուած կուրծքը թոյլ չտալով արեան շրջանառութիւնը արիւնը գլխի մէջ է լցւում և այդ պատճառով երեխան այլ ևս չկարողանալով աղաղակել՝ կարծում են թէ շատ հանգիստ է պահում իրեն ևս չգիտեմ թէ քանի ժամ կարող է դիմանալ երեխան այս գրութեամբ՝ առանց իր կեանքը վտանգելու, սակայն կասկածում եմ, որ կարողանայ շատ երկար դիմանալ:—Այս է ինչպէս երեւում էք քարուրի ամենամեծ յարմարութիւններից մէկը.

42. Պնդում են, որ եթէ բոլորովին աղաս թողնէինք մատուկներին, նրանք կարող էին իրենց մարմնին այնպիսի դիրք տալ և այնպիսի շարժողութիւններ անել, որոնք նրանց անդամների կանոնաւոր կազմութեան համար վասակար կարող էին լինել. Այդ էլ մեր կեղծ իմաստութեան այն դատարկ սովորականութիւններից մէկն է, որ փորձառութեամբ երբէք չեն ծշտուել. Այն խելացի ազգերի բազմաթիւ մատուկներից, որոնք մեծացել են իրենց մարմնի անդամների անսահմանափակ գործածութեամբ, ոչ մէկը չէ եղել վիրաւորուած կամ վասառուած. նրանք չեն կարող իրենց շարժողութիւններին այն ոյժը տալ՝ որ կարող լինէր նրանցը վասագաւոր դարձնել. և եթէ նրանք բռնազօս դիրք բռնեն, շուտով իրենց զդացած ցաւը կյաշցնի, որ այդ դիրքը փոփեն.

43. Մեր մտքով անդամ չէ անցել գեռ՝ շան լակուններին կամ կատուի ձագերին բարուրի մէջ փաթաթել արդեօք նկատուել են այս անփութութեան որ և ից վասակար հետեւնք ները. Երեխանները հարկաւ աւելի ծանր են, բայց չէ՝ որ նրանք նոյնչափ ևս թոյլ են. Նրանք հազիւ են կարողանում շարժուել ի՞նչպէս պէտք է իրենց վասէին. Եթէ նրանց ըստ երկարութեան մէջքի վրայ թողնէինք, նրանք այդ դրութեամբ էլ կմոռնէին, կրիսի նման, առանց շշուել կարողանալու.

44. Արդէն վազուց է, որ կանայք չէին ուկում իրենց զաւակներին ծիծ տալ. այժմ էլ բոլորովին չեն ու զում նրանց աշխարհ բերել. բնականարար մէկը հետեւում է միւսին. Քանի որ մայր լինելն այդպէս տաղտկալի է, միջոց են գանում բոլորովին ազատուելու մայր լինելու դրութիւնից. և սեոի աճեցման համար որոշուած գրգիռը դարձնում են նրան վեասելու մի միջոց. Այս սովորութիւնը, ազգաբնակութեան պակասելու ուրիշ պատճառների հետ ի միասին, գուշակում է Եւրոպայի մերձաւոր ճակատագիրը. Գիտութիւնները, արուեստները, փիլիսոփայութիւնը և դրանից իր ծագումն առնող բարոյագիտութիւնը շուտով Եւրոպան անապատ կդարձնեն. Յետոյ նրա բնակիչները կը լինեն վայրենի կենդանիները — մի չնչի՞ն փոփոխութիւն աղդաբնակութեան.

45. Ես յաճախ տեսել եմ թէ այդպիսի բաներ անող մանկամարդ կանայք ի՞նչպիսի վարպետութեամբ այնպէս են ձևացնում, իբրև թէ ուզում են իրենց զաւակներին ծիծ տալ, բայց ստիպուած են լինում իրենց սիրելի այդ ցանկութիւնից ձերք վերցնել. Նրանք ճարտարութեամբ յանցանքը ձգում են

իրենց ամուսինների, բժիշկների և յանաւանդ մայրերի վրայ  
Ամուսնազած մարդը եթէ համարձակուի թշյլ տալ, որ իր կի-  
նը երեխային ծիծ տայ, կորած մարդ կլինի. նրան կվատաշամ-  
քաւեն իրը և մարդասպանի, որից կինը սիրով աղատուել կու-  
զնայի, և ելահա՛ս ամուսին, դու պէտք է ք հայրական սէրը  
խաղաղութեանը զո՞ս բերես, Բաղդաւորութիւն է, որ գիւղե-  
քում ձեր ամուսիններից աւելի ժուճկալ կանայք կան, բայց ա-  
ւելի ևս մեծ բաղդաւորութիւն կլինի, եթէ սրանց վաստակած  
ժամանակը ուրիշների համար չլինի որոշուած:

46. Կանանց պարտաւորութիւնն անժխտելի է, բայց ևըն-  
դիր է, թէ արդեօք նրանց ստորական անփութութիւնից ա-  
ռաջացած հանգամանըը նշանակութիւն չոնի՝ մանուկների հա-  
մար. արդեօք սրանց համար միենո՞յն է՝ թէ իրենց մօր ծիծն  
են ուտում թէ ուրիշնը նոմ կարծիքով այս ինդիրը, որտեղ  
բժիշկները պէտք է վժի կայացնեն, կանանց ցանկութեան հա-  
մաւայն է վճռուած: <sup>1)</sup> Ես ևս աւելի լաւ կհամարէի, որ երե-  
խան առողջ դայեակի կաթն ուտէր, բան թէ հիւանդ մօր ծիծը  
ծծէր, եթէ երկիւղ կայ, որ երեխան մի որևէ նոր վնաս կսա-  
նայ այն արինից. որից ինըը սեռուել է:

47. Բայց արդեօք այս ինդիրի վրայ միմիայն ֆիզիքակա՞ն  
տեսակէտից պէտք է նայել. արդեօք յանուկը մօր կարիքն ա-  
ւելի քիչ է զգում, բան մայրական կրծքի: Ու րիշ կանայք, նոյն  
իսկ անասունները կարող են տալ նրան մօր զացած կաթը, սա-  
կայն մայրական ինամատարութիւնն անփոխարինելի է: Այն  
կինը, որ իր սեպհական մանկան փոխարէն, ուրիշ երեխայ է  
կերակրում, վաս մայր է. ի՞նչպէս կարող է նա լաւ դայեակ  
լինել նա կարող է այդ դառնալ, բայց հետզետէ. սովորու-  
թիւնը պէտք է բնութիւնը փոխէ, բայց այդ միջոցին վատ  
ինամուած երեխան կարող է հարիւր անգամ ոչնչացած լինել՝  
մինչև որ նրա ինամատարը մայրական բնբշութիւն ձեռք բերէ  
նրա համար:

48. Հենց այս առաւելութիւնից առաջանում է մի ան-

<sup>1)</sup> Կանանց և բժիշկների դաշնակցութիւնը ես միշտ հա-  
ճարել եմ Փարիզի զուարձակի առանձնայատկութիւններից մե-  
կը. Կանանց շնորհիւ բժիշկները հռչակ են ստանում և բժիշկ-  
ների շնորհիւ կանայք էլ իրենց կամքն են կատարում: Ըստ  
այս և գաղափար կարելի է կազմել, թէ ի՞նչպիսի ճարտարօւ-  
թեան տէր պէտք է լինի բժիշկը: որ հռչակ ստանայ:

պատեհութիւն. այդ անպատեհութիւնը միայն բաւական էր իւրաքանչիւր հասկացող կնոջն արգելելու, որ թոյլ տայ իր զաւակին ուրիշ կնոջիդ մնուելու. նա բաժանում է իր մայրական իրաւական իրաւական սիրել, այս աւելի ևս իր մանկան բարացնում է իրենից. նա պէտք է ականատես լինի, որ իր զաւակը մի ուրիշ կնոջը նոյնքան սիրէ, որքան իրեն և գուցէ գեռ աւելի էլ նա պէտք է զգայ, որ երեխայի գէպի իր մայրը տածած քընքութիւնը մի ողորմութիւն է, իսկ դայեակի համար զգացածը՝ պարտականութիւն. որովհետև՝ ումից որ մանուկը մայրական խնամատարութիւն է վայելել, նրան էլ կսիրէ:

49. Այս անպատեհութեան առաջը նրանով են ուզում առնել, որ մանկանց մէջ արհամարհանք են ներշնչում գէպ իրենց դայեակները, նրանցն իսկական աղաթինների տեղ գնելով: Երբ դայեակների գործը վերջանում է, երեխան խլում են նրանց ձեռքից կամ թէ արձակում են և այնուհետեւ այնքան վատ են ընդունում նրանց, որ նրանք էլ զգուշանում են իրենց սանիկին պյացելել Սի քանի տարուց յետոյ երեխան ո՛չ տեսնում է իր դայեակին, ո՛չ էլ ծանաչում նրան: Այն մայրը, որ երեակայում է թէ դայեակի տեղը կրոնի և իր անփութութիւնն անսրտութեամբ է փոխարինում, սխալում է, որովհետև անքնական ծծկերից քնքայց զաւակ դարձնելու փոխարէն, նրա սրտում անշնորհակալութեան զգացմունքն է մնուցանում: Նա սովորեցնում է երեխային՝ իրեն կեանք տուողին մի օր նոյնպէս արհամարհել, ինչպէս որ իրեն՝ իր կամուվ մնուցանողին:

50. Ես այս կէտի մասին ամենայն լրջութեամբ կիսօէի, եթէ օգտակար Խորհրդածութիւնների մայլ նորից զուր տեղն առաջ բերելն այնպէս կհատեցուցիչ չլինէր. այս ինդիրն աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ կարծում են, Եթէ ուղում ես իւրաքանչիւր մարդու գէպ իր առաջին պարտականութիւնները յետ տանել, մայրերից սկսիր. դու կզարմանասր, թէ ո՛րքան շատ բան այլ կերպ կլինի. Այս առաջին պականութիւնից են առաջ գալիք կարգով միւս բոլորը ամբողջ բարյական կարգաւորութիւնը տեղից խախտում է, սրտի բնական յոյզերը կորցնում են զգալու ընդունակութիւնը, ընտանիքի ներքին կեանքը կորցնում է իւր հրապարը, չետզշետէ ամող ընտանիքի սրտաշարժ տեսարանն այլ ևս ամուսնուն իրտան հետ չէ կապում և օտարներին էլ յարգանաց սահմաների մէջ չէ պահում. անզաւակ մայրն այնքան էլ յարգուած չէ-

ընտանիքներն այլ ևս մնայուն վայրեր չեն ներկայացնում. սովորութիւնն այլ ևս չէ ամրապնդում արեան կապերը. չկան այլ ևս ո՛չ հայրեր, ոչ մայրեր, ոչ զաւակներ և ոչ էլ քոյրեղբայրներ. մարդ հազիւ է իրեն ճանաչում, ուրեմն ինչո՞ւ պէտք է սիրէ. Ամեն մէկը միմիայն իր մասին է մտածում դեռև եր տունը միայն տիտուր անապատ է ներկայացնում, զուարձութիւնն էլ պէտք է դուրսը փնտրել.

51. Իսկ եթէ, ընդհակառակը, մայրերը զիջանեն՝ իրենց զաւակներին անձամբ ծիծ տալու, այն ժամանակ բարբերն ինքն ըստ ինքեան կլաւանան և բոլոր սրտերում կսկսեն բնական զգացմունքներ յուզօտիկ պետութիւնն ազգաբնակութեամբ կլցուի. այն առաջին կէտը միայն կրկին ամեն բան կմիաբանէ. Ընտանեկան կեանքրի հրապարակ ակախանուած բարբերի ամենալաւ հակաթոյնն է. Մանկանց ազմուկը, որ այնքան խանգարող է համարւում, հանելի կլինի. այն ժամանակ հայրն ու մայրն աւելի կարեւոր կլինեն, միմեանց արժանի և նրանց ամուսնական կապն էլ աւելի սրտանց. Երբ ընտանիքում աշխոյժ և կեանք է տիրում, ընտանեկան հոգսերն մօր ամենասիրելի զբաղմունքը և հօր ամենասիրելի հանգստութիւնը կլինեն. Այս պէս միմիայն այս զեղծման ոչնչացմանը շուտով կհետեւ մի ընդհանուր վերածնութիւն. բնութիւնը շուտով իր բոլոր իրաւունքները ձեռք կրերէ. Եթէ առաջ կանայք կրկին մայրեր դառնան, շուտով տղամարդիկն էլ կրկին հայրեր և ամեւսիններ կըդառնան:

52. Սակայն ի զ՞որ եմ խօսում. նոյն իսկ աշխարհային վայելչութիւնների չափազանց յագեցումն անգամ չի կարող վերսիշեալները. կրկին վերականգնել. Կանայքն այլ ևս մայր չեն էլ լինի, որովհետեւ չեն կամենում այլ ևս. Եւ եթէ նրանք նոյն իսկ կամենային, հազիւ թէ կարողանային էլ. այսօրուայր բարբերին նայելով՝ ամեն մի այդպիսի փորձ անողը իր շրջապատող բոլոր կանանց ընդդիմադրութեան կհանդիպի, որոնք երդուել են հակառակել նրան, որին ուրիշները չեն ուզում հետեւել.

53. Սակայն և այնպէս մինչև այժմ էլ կան այնպիսի առողջ բնութեան տէր մանկամարդ կանայք, որոնք այս կէտումվսահաշանում են հակառակելնորաձեռւթեան իշխանութեանը և իրենց քոյրերի աղաղակներին և առանց վհատուելու տոկունութեամբ կատարում են այն քաղցր պարտականութիւնը, որ բնութիւնը.

դրել է նրանց վրայի կցիւթէ այս պարտականութիւնը կատարողա ների համար որոշուած բարիքներն ուրիշ շատերին էլ դրաւեկին գէպ իրենց. Յենուելով մտածողութիւնից առաջացած հետևանքո ների և դիտաղութիւնների վրայի, որոնք միշտ ինձ համար ճշշա մարտութիւններ են դարձել այդ բաշասիրա մայրերին եւ խոստանում եմ ապահով կերպով՝ ճշմարիտ և տեական համա կրութիւն իրենց ամուսինների կողմից, ճշմարիտ ճանակական քնքշութիւն՝ իրենց տղաների ու աղջիկների կողմից, հրապա րակական յարգանք և գնահատութիւն, բարեյաջող ծննդաբե րութիւն՝ առանց վատ գէպերի և հետեանքների, տեական և պնդակալմ առողջութիւն և վերջապէս այն զուարծութիւնը, որ այդ օրինակին կհետևեն իրենց աղջիկները և ուրիշների աղջ կների համար էլ օրինակ կլինեն.

54. Որտեղ այլ ևս մայրեր չկան, այնտեղ զաւակներ էլ չկան. Նրանց պարտականութիւնները փոխադարձ են. եթէ մէկ կողմից նրանք ճշտութեամբ Տկատարուեն, միւս կողմից էլ անհոգութեան կմատնուեն. Մանուկը պէտք է սիրէ իր մօրը՝ նախ քան գիտենալը, որ այդ իր պարտականութիւնն է. Երբ արեան ձայնին չէ նպաստում սովորութիւնն ու սիրալիր ինա մատարութիւնը, նա հենց առաջին տարիններում համրանում է և սիրու մեռնում է, եթէ կարող եմ այսպէս ասել, ճնուելուց առաջ. Այսպիսով հենց առաջին բայլափաթին բնութիւնից դուրս ենք գալիս.

55. Բայց նոյնպէս բնութիւնից դուրս կդանք, եթէ բոլո ըսվին դրա հակառակ շաւղով գնանք, այսինքն երբ կինը ո՛չ թէ անհոգութեան մատնի իր մայրական պարտականութիւնն երը, այլ չափազանցութեան հասցնի դրանց. Այդպէս է վարում նա երբ իր մանկանը կուռք է շինում, երբ նրա տկար կողմերին նոր սնունդ և շյժ է առիս, որպէս զի ինը չզգայ այդ, և երբ յուսալով բնութեան օրէնքներից խուսափելու՝ ամեն ցաւ պատճառող հանգամանք հեռացնում է նրանից, առանց մտածելու, որ այդպիսով մի քանի անյարմարութիւնների պատճառով, որից պահպանում է նրան հենց այդ վայրկեանի համար, ապագայի նկատմամբ նրա գլուխն վտանգներ և չարիք ներ է բարձում. անօգուած նախազգուշութիւն է՝ մանկական հա սակի թուլութիւնն երկարացնել և հասցնել մինչև այրական հասակի վաստակալի ժամանակամիջոցը. Ըստ առասպեկի՝ թէ ախսն իր որդուն ընկզմեց Սահիւքսի ալիքների մէջ՝ նրան անխո

ցելի դարձնելու Նպատակով։ Այս պյլաբանութիւնը սիրուն և դիտողական է, Բայց այն անսիրտ մայրերը, որոնց մասին է իմ խօսքը, ուրիշ կերպ են անում։ Նրանք իրենց զաւակներին այնքան խորն են ընկղմում մեղկութեան մէջ, որ իսկապէս նրանց թշուառութեան համար են նախապատրաստում։ Նրանք բաց են անում ծակոտիներ ամեն տեսակ չարիքների համար, որոնց ձանկը պէտք է ընկնեն նրանք իրեն չափահասներ։

56. Դիտի՛ր բնութիւնը և նրա ցոյց տուած ճանապարհով գնա՛։ Նա անդադար վարժեցնում է մանուկներին, ամեն տեսսակի փորձերով կազդուրում է նրանց մարմինը և շուտով սովորեցնում է նրանց՝ թէ ի՞նչ է նեղութիւնն ու ցաւը։ Ատամների դուրս գալը ջերմ է պատճառում, սաստիկ փորացաւը՝ ջղաձգութիւն։ անընդհատ հազը համարեա՛ թէ խեղդում է, որդերը չարչարում են նրանց։ Հիւթալիութիւնը փչացնում է նրանց արիւնը։ ամեն տեսակ թթւուտներ են եռում նրանց մեջ և վտանգաւոր պայարներ առաջ բերում։ Մանկական հասակի համարեած թէ ամբողջ առաջին շրջանը հիւանդութիւն և վտանգ է. աշխարհ եկած երեխաների կէսը մեռնում է ութ տարեկան դառնալուց առաջ, Եթէ այս փորձանընթրից յաջողութեամբ է դուրս գալիս երեխան, ոյժ է վաստակած լինում։ Նրա կեանքի հիմունքները գործադրութեան միջոցների աւելի հաստատուն կլինեն։

57. Այս է բնութեան օրէնքը։ Խնչո՞ւ ես հակառակը գործում։ 2ե՞ս տեսնում որ նրա գործը, կարծելով թէ լաւացնում ես, հիմնայատակ ես անում և նրա ջանքերի ազդեցութիւնը ոչչացնում։ Դու կարծում ես թէ վտանգը կկրկնապատկուի, եթէ արտաքուստ այն անես, ինչ որ նա ներքուստ է անում, մինչդեռ դրանով վտանգն աւելի ես հեռանում ու փոքրանում է։ Փորձը ցոյց է տալիս, որ բնբշացրած երեխաներից աւելի շատերն են մեռնում, քան թէ միւսներից։ Եթէ նրանց ուժերի չափեց չանցնենք, աւելի պակաս վտանգաւոր է երեխաներին գործի դնելը, քան թէ ինայինը։ Վարժեցրէ՛ք ուրեմն նրանց նախապէս այն ցաւալի դիպուածների համար, որոնց ապագայում պիտի ենթարկուեն նրանք։ Պնդակազմ դարձրէք նրանց մարմինը եղանակի, կլիմայի, տարերքի սաստկութիւնների, քաղցի, ծարաւի և յօդնածութեան դէմ։ Ընկղմեցէ՛ք նրանց Ստիւքսի ջրերի մէջ։ Քանի որ մարմինն ինքն իւր համար սուս վորութիւններ չեն ստեղծել, կարելի է անվտանգ՝ ցանկացած

սովորութիւնը յատկացնել նրան. բայց եթէ նա մի անդամ արդէն իր մայում կերպարանքն է ստացել ամեն մի խանգարմունք վտանգաւոր կլինի նրա համար. Մանուկը կարող է այնպիսի փոփոխութիւն կրել, որպիսին չափահասը չէ կարող. նրա փափուկ և ճկուն նետրդերն առանց ջանքերի մեր ցանկացած սովորութիւնն են իւրացնում. իսկ չափահասի արդէն կոշտացած նետրդերը միմիայն ուժի շնորհիւ կարող են ուրիշ դրութիւն ստանալ: Այդպիսով ուրեմն կարելի է մանկան ուժերն ամրացնել՝ առանց նրա կեանքն ու առողջութիւնը վտանգի ենթարկելու և եթէ նոյն իսկ մի որևէ վտանգի ի նկատի ունենայինք, այնուամենայնիւ չպէտք է դրանից յետ կանգնէինք Բայց որովհետեւ այդ վտանգները միշտ անբաժան կապակցուած են մարդկային կեանքի հետ, աւելի լաւ է հարկաւ, դրանց փոխադրել մարդկային կեանքի այն ժամանակամիջոցը, որտեղ նըրանք ամենաանվեսաը կարող են լինել.

58. Մանուկը որբան հասակն առնում է, այնքան աւելի թանկադին է դառնում. Նրա անձի արդէքի, վրայ աւելանում է նաև նրա վրայ գործադրուած հոգացողութեան արդէքը. Նրա կորուստի հետ միանում է մահուան զգացմունքը. Ուրեմն առաւելապէս պէտք է մտածենք նրա ապադայի մասին, եթէ ուզում ենք նրան պահպանել. մանկանը պէտք է, երիտասարդ դառնալուց առաջ, զինել երիտասարդական հասակի վտանգների դեմ, որովհետև եթէ կեանքի զինը բարձրանում է մինչև այն վայրկեանը, երբ կարելի է նրան օգտակար դարձնել, որպիսի յիմարութիւն է, մանկական հասակի մի քանի վտանգներից փաթուստ տալը, որպէս զի նրա իւրահաս հասակում այդ վտանգները բազմապատկուեն. Սրանք են ձեր բազմահռչակ ուսմունքները.

59. Մարդու վիճակն է՝ չարչարուել ամեն ժամանակ. Նոյն իսկ ինքնապահպանութեան հոգաց ցաւերի հետ է կապակցուած-ներջանիկ է նաև, ով իր մանկութեան միջոցին միայն մարմական ցաւեր է զգում. այդ ցաւերը շատ աւելի պակաս խիստ ու սաստիկ են, քան ուրիշները և շատ հաղիւ է պատահում, որ դրանք ստիպեն մեղ՝ մեր կեանքից հրաժարուել. Յօդատապի պատճառով մարդ իր զլուխը չէ սպանում. Համարեա՛ թէ միմիայն հոգեկան վշտերն են մեզ յուսահատութեան հասցնում. Մենք ողբում ենք մանկութեան վիճակը, այն ինչ պէտք է նոյն իսկ մեր վիճակը ողբայինք. Մեր ամենամեծ չարիքների աղբիւրները հենց մեր մէջն են.

60. Մանուկը հենց ծնուելիս աղաղակում է. Նրա մանկութեան առաջին շրջանը լալով է անցնում. Ծուտով սկսում են օրօրել և գգուել նրան՝ որպէս զի հանգստանայ. յետոյ էլ սպառնում և հարուածում են, որպէս զի ստիպուի լոեր. Մենք կամ այն ենք անում, ինչ որ նրան է դուր գալիս, կամ թէ պահանջում ենք նրանից այն՝ ինչ որ մեզ է դուր գալիս. կամ մենք ենք նրա քմահաճութեանը ենթարկում, կամ թէ նրան ենք ենթարկում մեր քմահաճութեանը. ոչ մի տեղ միջին ձանապարհ չկայ. նա կամ հրամաններ պէտք է տայ, կամ ընդունի. Այսպէս են իշխանութեան և հպատակութեան մասին նրա ունեցած առաջին տպաւորութիւնները. Դեռ խօսել կարողանալուց առաջ՝ հրամայում է. գործել կարողանալուց առաջ՝ հնագանդում է. և երբեմն պատժում է իր յանցանքը ըմբռնել կարողանալուց առաջ կամ թէ աւելի լաւ է ասել՝ յանցանք գործելու կարողութիւնից առաջ. Այսպէս կանխօրէն ներշնչում են նրա սրտի մէջ այն կրքերը, որ յետոյ բնութեան վրայ են ձգում, և երբ ամեն միջոց գործ են դնում, որ նա չարութիւն սովորի, ողբում են, թէ ինչո՞ւ է նա այդպէս գարձել:

61. Երեխան այս կերպ անց է կացնում վեց կամ եօթը տարի, կանանց ձեռքի տակ, երբեք զո՞հ իր և նրանց քմահաճոյքի. և երբ նրան այս կամ այն բանը սովորեցնում են, այսինքն երբ նրա յիշողութիւնը ծանրաթեռնում են այնպիսի բառերով, որ նա չի կարող հասկանալ կամ այնպիսի բաներով, որ նրան պէտք չեն, իրենց սերմանած կրքերով նրա մէջ բնութիւնը խեղդելուց յետոյ՝ այդ արշենստական կերպով կրթած արածը յանձնում են մի ուսուցչի. վերջինս էլ մանկան մէջ եղած արհեստական սաղմերն աւելի է զարգացնում և ամեն բան հասկացնում է նրան՝ բացի իր անձը ճանաչելուց, բացի ապրել և երջանիկ լինելուց. Եւ երբ վերջն այս ստրկական և միենայն ժամանակ իշխանական զաւակը, գիտութիւններով լի և առանց հասկացողութեան, թէ հոգուով և թէ մարմնով հաւասարապէս թոյլ, աշխարհ է դուրս գալիս՝ իր յիմարութիւնը, հպարտութիւնն և իր բոլոր մոլորութիւնները ցայց տալու, այն ժամանակ անիրաւացի կերպով ողբում ենք մարդկանց թշուառութիւնն ու թիւրութիւնը. Խնչո՞ւ ենք գանգատում, դա մեր քմահաճոյքի կրթած մարդն է. բոլորովին այլ է բնութեան մարդը.

62. Եթէ ուղում ես, որ մանուկը պահպանէ իր սկզբնաւ կան կերպարանքը, հենց նրա աշխարհ՝ գալու վայրկեանից՝

պէտք է հսկողութիւն ունենաս նրա վրայ, Ծնուցեց թէ չէ, իսու կոյն քո իշխանութեան ներքց առ նրան և մինչև չափահաս դառնալը ձեռքիցդ մի՛ թողնի, եթէ ոչ երբէք յաջողութիւն չես ունենայ, Խնչպէս որ մայրը երեխայի բնական դաստիարակչուհին է, այնպէս էլ Հայրը նրա բնական ուսուցիչն է, Թող դրանք իրենց գործունէութեան կարգաւորութեան և համակարգութեան վերաբերմամբ միմեանց հետ համաձայնութիւն կայացնեն, մանուկը պէտք է մէկի ձեռքից միւսի ձեռքն անցնի: Մանուկը հասկացող, բայց հասարակ հօր ձեռքով աւելի լաւ կդաստիարակուի, քան թէ աշխարհիս ամենաճարտար ուսուցչի շնորհիւ, որովհետև աւելի շուտ եռանդը կփոխարինէ ընդունակութեան, քան ընդհակառակը:

63. Սակայն գործերը, կոչումը, պարտաւորութիւնները... այո՛, պարտաւորութիւնները. Հայրական պարտաւորութիւնը հարկաւ վերջինն է<sup>1)</sup>). Չափակը է զարմանալ այն հանգամանքի վրայ, որ մի մարդ, որի կինը չի կարողանում իրենց զուգաւորութեան պտուղը սննդել ինքն էլ չի կարողանայ նրան դաստիարակել: Ընտանիքից աւելի հրապուրիչ պատկեր չկայ. բայց միմիայն մի անձիշտ գիծ փշացնումէ միւս բոլոր մասցածը, Երբ մայրը շատ թոյլ է դայեակ լինելու համար, Հայրն էլ շատ զրացուած կինի ուսուցիչ լինելու համար, Երեխանները տանից հեռու, գիշերօթիկ ուսումնարաններում, դպրոցներում և վանքերում ցրուած՝ դէպի հայրական տունն ունեցած սէրը մի այլ տեղ կտանեն կամ, աւելի ճիշտն ասած, նրանք տուն կըերեն ոչ մի բանի սրտով չկպչելու սովորութիւնը. Քոյր ու

<sup>1)</sup> Երբ Պլուտարքոսի մէջ կարգում ենք, թէ ցենզօր Կատան, որ այնպիսի մեծ հոգակով էր կառավարում Հասովը, իր որդուն անձամբ դաստիարակեց օրորոցից սկսած և այն էլ այնպիսի հոգացողութեամբ, որ ամեն գործ թողնում էր, որպէս զի տեսնի թէ ինչպէս է երեխայի դայեակը, պայինքն մայրը, մերկացնում նրան և լողացնում: Երբ կարգում ենք Սուէտոնի գրուածքում, թէ Օգոստոսը, աշխարհի ակրը, որ անձամբ էր տիրել և ինքն էր կառավարում, իր թոռանն ինքն էր գրել, լողանալ և գիտութեանց սկզբնական տարրերը սովորեցնում և շարունակ իր մօտն էր պահում, պէտք է հարկաւ ծիծաղենք պյն ժամանակուայ բարի մարդկանց վրայ, որ պայինքի չշին բաներից հաճոյը էին զգում, բայց ի հարկէ այնքան սահմանափակ էին, որ չին հասկանայ մեր ժամանակի մեծ մարդկանց մեծ գործերը.

Եղբայրները հազիւ են միմեանց ճանացում։ Երբ նրանք, մի որ  
և է տօնի կամ հանդիմի պատճառով, բայցը միասին ժողովում  
են, ի հարկէ շատ բաղաբավարի կլինեն միմեանց հետ, բայց  
իրեւ օտար կվարուեն։ Հենց որ գադարում է ծնողների մակրո-  
մական յարաբերութիւնը, հենց որ ընտանիքի միասին ու միա-  
տեղ բնակուելը դադարում է կեանքի հրապարը լինելուց,  
պէտք է հարկաւ անկանոն կենցաղավարութեամբ մարդ իրեն  
անվնաս պահէ։ Ո՞վ այնպէս անմիտ կլինի, որ չհասկանայ այս  
բոլորի մէջ եղած կապակցութիւնը։

64. Երբ հայրը սիրում է իր զաւակներին և կերակրում,  
դրանով նա իր պարտականութեան միմիսյն երրորդ մասն է  
կատարում։ Մարդկութիւնը նրանից մարդիկ է սպասում, հա-  
սարակութիւնն՝ ընկերական մարդիկ, պետութիւնը՝ քաղաքա-  
ցիք։ Եւրաքանչիւր մարդ, որ կարող է այս երակի պարտը<sup>ը</sup>  
հասուցանել և չէ անում, յանցաւորէ և զուցէ աւելի ևս յան-  
ցաւոր, եթէ միայն կիսով չափ է անում Ով իր հայրական  
պարտաւորութիւնները չի կարող կատարել իրաւունք չունի  
հայր գառնալու։ Ոչ աղբաւութիւնը, ոչ գործը, ո՛չ մարդկան-  
ցից ակնածելը չեն կարող ազատել նրան՝ իր զաւակները սնու-  
ցանելու և անձամբ գատարակակելու պարտականութիւնից։ Հա-  
ւատա՛ ինձ, ընթերցո՞դ։ Կո նախապէս ասում եմ իրացքնիւրին,  
ով զգացմունք ունի և այդպիսի սուրբ պարտաւորութիւններն  
անփութութեան է մատնում, — երկար ժամանակ դառն արտա-  
սուքներ կթափէ իր սիալների համար, և երբէք միիթարու-  
թիւն չի գտնի<sup>1)</sup>։

65. Բայց ի՞նչ է անում այս հարուստ, բազմազբաղ մարդը,  
որ իբրև թէ ստիպուած է իր զաւակներն երեսի վրայ ձգել  
նա վճարում է մէկ ուրիշին՝ այն պարտականութիւնները կա-  
տարելու համար, որ իրեն տաղտկալի են թւում։ Վաճառելի՛  
արարած, կարծում ես թէ կարող ես փաղով քո զաւակին մի ուրիշ  
հայր տա՛լ Խնքդ քեզ մի խարի, նոյն իսկ տէ՛ր ել չես տալի

<sup>1)</sup> Երբ ես գծագրեցի իմ շղաստիարակութեան մասին՝  
աշխատութիւնը, զգացի, որ այնպիսի պարտականութիւններ  
եմ զանցաւութեան տուել, որից ոչ մի ըան չէր կարող ինձ ա-  
զատել։ Այս յանդիմանութիւնն այնքան ծանր էր ինձ համար,  
որ համարեա՛ թէ ստիպեց ինձ յանցանցներս խոստովանել հրա-  
պարակաւ ևսիլի՛ սկզբում։

Նրան, ո՞չ, այլ մի ստրուկ, Բայց դա շուտով քո դաւակից էր  
մի ստրուկ կպատրաստէ:

66. Շատ են խօսում լաւ դաստիարակի յատկութիւնների  
մասին, Առաջինը, որ ես կպահանջէի նրանից—և միայն սա են-  
թադրում է ուրիշ շատերը—այն է, որ նա թոյլ չտայ, որ ի-  
րեն գնեն Կան այնպիսի վեհ կոչումներ, որոնց չէ կարելի  
նուիրուել փողի համար և միւնցին ժամանակ արժանի լինել  
այդ կոչմանը. Սյդպիսի կոչումն է պատերազմողի և դաստիա-  
րակի կոչումը—Ուրեմն ո՞վ պէտք է դաստիարակէ իմ ման-  
կանը.—Դու ինքդ, ինչպէս արդէն ասացի.՝ Բայց ես չեմ կա-  
րող—Դու չեմ կարող... ուրեմն, որոնի՞ր մի բարեկամ Ուրիշ  
հնարք չեմ գանում ես.

67. Դաստիարակը—Ճշմարիտ որ վեհ հոգի է, Եւ իսկա-  
պէս մարդ գարձնելու համար, մարդ ինքը պէտք է կամ բնոււ  
թիւն լինի, կամ թէ առաւել քան մարդը. Եւ այսպիսի մի պաշ-  
տօն հանգիստ կերպով հաւատում են վարձկաններին.

68. Մարդ որբան աւելի է մտածում այդ մասին, այնքան  
աւելի նոր գժուարութիւններ են առաջ գալիս. Դաստիարակը  
պէտք է իր սանիկի համար դաստիարակուեր, նրա ծառաները  
պէտք է իրենց տիրոջ համար դաստիարակուէին, նրա ամրող  
շրջակայքը պէտք է այն տպաւորութիւնները ստանար, որ յե-  
տոյ նրան հաղորդէր. պէտք է դաստիարակութիւնից—դաստիա-  
րակութիւն յետ գնացինք, ո՞վ գիտէ թէ որբան. Ի՞նչպէս կառ  
րող է երեխան լաւ դաստիարակութիւն ստանալ այն մարդու  
ձեռքով որ ինքն ել լաւ չէ դաստիարակուել.

69. Արգեօք այդպիսի մի հազորազիւս մահկանացու կը-  
գտնուի: Եեւ կարող ասել, Ո՞վ դիտէ թէ ստորացման այս ժա-  
մանակներում մարդկային հոգին առաքինութեան ո՞ր աստիօ-  
ճանը կարող է բարձրանալ գեռ. Սակայն ենթադրենք՝ թէ այդ  
զարմանալի մարդը գտնուել է: Եթէ քննենք նրա անելիքը,  
մի և նոյն ժամանակ կտեսնենք, թէ նա ինչպէս պէտք է լին-  
ի: Բայց ես կարող եմ նախապէս ասել, որ այն հայրը, որ համ-  
կանում է լաւ դաստիարակի բոլոր արժէքը, շուտով կվճոի հրատ-  
ժարուել դրանից, որովհետեւ նա աւելի պէտք է աշխատէ մի  
այդպիսի դաստիարակ դանելու քան թէ ինքը դաստիարակ  
դառնալու համար. Եթէ նա ուզում է իր համար մի բարեկամ  
գտնել, թո՞ղ իր զաւակին այնպէս դաստիարակէ, որ ապագայում  
իր բարեկամը դառնայ. այդ դէպքում նրան ուրիշ տեղ որոնե-

լու հոգակց կաղատուի. բնութիւնն էլ արդէն այդ գործի կէսն արել է նրա համար.

70. Մի մարդ, որին ես միայն իր դասակարգի աստիճանով եմ ճանաչում, առաջարկեց ինձ՝ յանձն առնել իր որդու դաստիարակութիւնը. Նա դրանով հարկաւ ինձ մեծ պատիւ արաւ, բայց իրաւունք չըւնի գանգատուելու իմ բացասական պատասխանի վրայ. ընդհակառակը, նա պէտք է շնորհակալ լինի իմ զգուշութիւնից. Եթէ ես նրա առաջարկութիւնն ընդունէի և իմ մեթոդով սխալուէի, դժբաղդ դաստիարակութիւն կլինէր. իսկ եթէ յաջողէի, աւելի շատ կլինէր, որովհետեւ նրա որդին կուրանար իր տիտղոսը. Նա չէր կարող այլ ևս իշխան լինել.

71. Ես այնքան յաւ եմ հասկանում դաստիարակի պարագաւորութիւնների վեհութիւնը և զգում իմ անընդունակութիւնը՝ որ երբէք այդպիսի պաշտօն չէի ստանձնի՝ ինչ կողմից էլ որ առաջարկելու լինէին ինձ այդ պաշտօնը. Նոյն իսկ բարեկամութեան տեսակէտից աւելի ես նոր հիմք պէտք է ունենայի մերժելու. Ես կարծում եմ, որ այս գիրքը կարդալուց յետոյ շատ բշերն ինձ այդպիսի առաջարկութիւն կանեն, բայց այնուամենայնիւ ինդրում եմ նրանցից, որոնք կցանկանային այդ անօգուտ փորձն անել, թող զուր նեղութիւն չքաշեն. Այդ կոչման մէջ ես վաղուց արդէն բաւականաշափ փորձել եմ իմ ուսժերը և վստահ կարող եմ ասել՝ թէ պիտանի չեմ: իմ դրութիւնն էլ կաղատէր ինձ այդ բանից, եթէ նոյն իսկ իմ բնական ունակութիւններն ինձ ընդունակ ցոյց տային այդ բանի համար. Այս հրապարակական բացատրութիւնն, իմ կարծիքով, պարտական էի տալ նրանց, որոնք, ըստ երևոյթին, ինձ այնքան չեն յարգում, որ իմ որոշումներն անկեղծ և հիմնաւոր համարեն.

72. Անկարող լինելով կատարել այդ ամենաօգտակար գործը, ուզում եմ գոնէ աւելի հեշտը փորձել և ուրիշ շատերի նման, ձեռքս ոչ թէ գէպի գործը, այլ գէպի գրիչը մեկնել այս կարևոր գործն անելու փոխարէն, կաշխատեմ ասել, թէ ինչպէս պէտք է անել.

73. Ես գիտեմ, որ այսպիսի ձեռնարկութիւնների հեղինակները դիւրութեամբ համակարգութիւններ են առաջ բերում, որոնց իրական գործածութիւնն իրենցից չեն պահանջում. գրանք առանց առանձին զանքերի շատ սիրուն հրահանգներ են տալիս, որոնց ոչ ոք չի կարող հետեւ. մանրամասնութիւն-

ների և օրինակների պակասութեան պատճառով, Նրանց նոյն խկ երադրծելի առաջարկութիւնները չեն երականանում, եթէ իրանք գրանց գործածութիւնը չեն ցոյց տուել.

74. Այդպէս ես որոշեցի իմ ստքումն ինձ համար մի սան վերցնել, որի հասակը, առողջութիւնը, դիտութիւնը և բնական ունակութիւնները յարմարուեն նրա դաստիարակութեան դործին. Նրան պէտք է իր ծնուելու վայրկեանից մինչեւ այն տարբեր հասցնեմ, երբ նա երբեք զարդացած մարդ՝ այլ ես բացի իրենից, ուրիշի առաջնորդութեան կարիք չի ունենայ. Այս ձեւն ինձ նպատակայարմար է թուում՝ տարակշյաների մէջ մոլորուելու վտանգից աղատելու մի հեղինակի, որ ինքն իր վրայ վստահութիւն չունի. որովհետև հենց որ հեռանում է սովորական գործողութեան եղանակից, պէտք է իրեն յատուկ եղանակը փորձէ իր սանի վրայ. Նա շուտով կնկատէ, կամ թէ ընթերցողը կնկատէ նրա փոխարէն՝ թէ արդեօք հետեւում է մանկութեան զարդացմանը և մարդկային սրտի բնական ընթացքին, թէ ո՛չ.

75. Այդ փորձեցի ես անել՝ չնայելով առաջ եկած բոլոր դժուարութիւններին. Իդուր սեղը դրբի ծաւալը չմեծացնելու համար, բաւականացայ այն հիմունքներն առաջ բերելու, որոնց ճշմարտութիւնն ամենքին հասկանալի պէտք է լինի. Սակայն այն կանոնները, որոնց համար փաստեր առաջ բերելը կարեղոր էր, բոլորն էլ զործադրեցի իմ հմիլի կամ ուրիշ օրինակների վրայ և լիակատար մանրամասնութեամբ ակներև ցոյց տուի իմ սկզբունքների կարելիութիւնը. գոնէ այդ է իմ ծրագիրը, որին որոշել եմ հետեւել, թող ընթերցողը դատէ՝ թէ արդեօք այդ յաջողուել է ինձ.

76. Այդ է պատճառը, որ սկզբումը քեզ խօսեցի Եմիլի մասին, որովհետև իմ առաջին դաստիարակչական սկզբունքները թէւ գոյութիւն ունեցող սկզբունքներին հակառակ են, բայց այնքան պարզ են, որ ամեն մատադոր մարդու համար անկարելի պէտք է լինի դրանց հետ չհամաձայնելը. Բայց երբ այժմ աւելի հեռու եմ գնում, իմ սանը, որ ուրիշ կերպով է առաջ նորդուում քան ձերը, այլ ես սովորական երեխայ, չեմ. Նա ինքն իրեն պէտք է առաջնորդուի. Յետոյ նա աւելի յաճախ հրապարակ կդայ և վերջը ո՛չ մի վայրկեան աչքից չեմ թողնի նրան, մինչեւ որ այլ ես իմ օգնութեան կարիք չունենայ.